№ 126 ՇԱԲԱԹ ՆՈՅԵՄԲԵՐԻ 5 1888 ՇԱԲԱԹ ՆՈՅԵՄԲԵՐԻ 5 № 126

ՏԱՍՆ ԵՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 բուբլ, կէս տարվանը 6 բուբլ։
Առանձին համարները 7 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
Իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԵԿՈՂ 1889 ԹՒԻՆ

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոգրամայով։ Մենք կը ստանանք սեփական ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 բուբլի է, վեց ամսվանը 6 բուբլի։

Գրվել «ՄՇԱԿԻՆ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բարօնական և Բազարնայա փողոցների անկիւնում Թամամշեվի տանը)։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար պէտք է դիմել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

Խմբագիր-հրատարակող՝ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հասարակական ինքնօգնութիւն. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Երկաթուղային բէֆօրմների հարցը. Միլդիու և Թոզ. Նամակ Ախալցխայից. Նամակ Նոր-Բայազէտից. Նամակ Խմբագրին. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կ. Պոլսի նորընտիր պատրիարքի բանախօսութիւնը. Նոր ընտրութիւնների հետեւանքը. Կենսագրական տեղեկութիւններ Աշըգեան պատրիարքի մասին. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.— ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. —ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԻՆՔՆՕԳՆՈՒԹԻՒՆ

—

Մեր անցեալ համարում ասեցինք որ մեզանում բացակայ է այն միջնորդ դասակարգը, ինտելիգենցիան, որը կարողանար մի կողմից հետևել մամուլի յայտնած մտքերին, ըմբռնել այդ մտքերը, իսկ միւս կողմից ապրելով ամբոխի, մասսայի մէջ, առաջնորդէր այդ ամբոխը տարիներով մամուլի քարոզած մտքերը իրական կեանքի մէջ իրագործելում։

Այո՛, ոչ թէ միայն բարձրագոյն ուսում ստացած, բայց նոյն իսկ միջնակարգ դըպրոցներում ուսումն աւարտած երիտասարդութիւնը, որը դուրս է եկել ամբոխից, մեզանում այլ ևս չէ վերադառնում ամբոխի շրջանը, չէ ապրում այդ շրջանում, չէ հետաքրքրվում նրա կարիքներով, չէ հետաքրքրվում հասարակական հարցերով, այլ մոռացում է միմիայն իր անձնական ապրուստի, իր անձնական կարիերի մասին։ Այդպիսով ամբոխը մնում է առանց տեղական առաջնորդների, առանց անմիջական ղեկավարողների՝ իր տնտեսական, բարոյական և մտաւոր կեանքի մէջ։ Այդպիսով բացակայ է մեր հասարակական կազմակերպութեան մէջ մի միջնորդ դասակարգ, որը մի կողմից ըմբռնելով կենսական նոր մտքերի էութիւնը, ջանար իրագործել ամբոխի իրական կեանքի մէջ մամուլի բերանով թէորիապէս յայտնած այդ մտքերը։

Բայց մեզ կասեն. եթէ չը կայ մեզանում ամբոխի հետ սերտ կապերով կապված, բարձրագոյն ուսում ստացած երիտասարդութիւնից բաղկացած ժողովրդական ինտելիգենցիա, անկարելի է, ուրանալ, որ դարձեալ ամբոխի հետ միասին ապրում, գործում է, և նրան ղեկավարում է մի այլ տեսակ ինտելիգենցիա, որը եթէ ոչ այդքան բարձր կրթութիւն է ստացել, բայց այնու ամենայնիւ իր մտաւոր և բարոյական զարգացմամբ բարձր է ամբոխից։

Այդ ինտելիգենցիան բաղկացած է մեր հոգևորականութիւնից, գաւառական մանր պաշտօնեաներից և ուսուցիչներից։

Առաջին դասակարգի, գիւղական հոգևորականութեան այն մասը, որի վրա կարելի էր յոյս դնել թէ նա կը ղեկավարի ամբոխը իր տնտեսական, մտաւոր և բարոյական առաջադիմութեան ասպարէզի վրա, իր այժմեան կրթութեան աստիճանի շնորհով հազիւ թէ կարող է սովորեցնել ամբոխին ինքնօգնութեան սկզբունքը և իրագործել այդ սկզբունքը ժողովրդի կեանքի մէջ։

Մանր պաշտօնեաների դասակարգը, իր պաշտօնական դիրքի շնորհով անկարող է մասնակցել իր յատուկ գործունէութիւնից դուրս՝ ժողովրդի առօրեայ կենսական հարցերի բարւոքելում։

Մնում է երրորդ դասակարգը՝ դա մեր մանկավարժական դասակարգն է, որը բաղկացած է մեր դպրոցների ուսուցիչներից և տեսուչներից։

Սրանց վրա է մեր ամբողջ յոյսը, որ նրանք հետևելով մամուլի գործունէութեան, ըմբռնելով տարիների ընթացքում մամուլի ասածները, և միշտ սերտ կապը պահպանելով ժողովրդի հետ, կը ջանան հասկացնել ժողովրդին կենսական այս կամ այն նոր մտքի օգուտը, կը ջանան ղեկավարել ամբոխը, յանձն առնելով նախաձեռնութիւնը այս կամ այն թէորիական մտքի իրական կեանքի մէջ իրագործելու։

Բայց ցաւն այն է որ մեր ուսուցչական դասակարգը, միակ դասակարգը, որը ապրելով ժողովրդի մէջ, մօտ է ժողովրդին և կարող էր ազդեցութիւն ունենալ նրա վրա,—մեծ մասամբ չափից դուրս աննշան յարգանք է վայելում ժողովրդի կողմից, ուրեմն չէ էլ կարող առանձին ներգործութիւն ունենալ ամբոխի վրա։ Ի՞նչ է դրա պատճառը։

Մեր կարծիքով այդ տխուր երևոյթի պատճառն այն է, որ մեր ուսուցչական դասակարգը դեռ խոր արմատներ չէ գցել ժողովրդի մէջ. շնորհով մեր դպրոցների կազմակերպութեան, ուսուցչական մի խումբ միջոց չունի երկար տարիներով մի և նոյն տեղում մնալ, այլ նրան վիճակված է միշտ մի տեսակ թափառական կեանք վարել։ Մեր դպրոցների անհաստատ ներքին կազմակերպութիւնը, նրանց անընդհատ ներքին երկպառակութիւնները առաջ են բերում այն անմխիթար երևոյթը, որ մեր ոչ մի դպրոցում մի և նոյն ուսուցիչները մի ուսումնական տարուց աւելի չեն մնում։ Այդպիսով ուսուցչական խմբերն էլ անդադար տեղափոխվելով քաղաքից քաղաք, գիւղից գիւղ,—չեն կապվում այս կամ այն տեղի ամբոխի հետ սերտ, անխզելի կապերով, և ուրեմն տեղական հարցերը նրանց համար միշտ մնում են խորթ և օտար։ Եւ իրանք էլ իրանց բընակութեան ու գործունէութեան տեղը անդադար փոխելով, չեն կարողանում տևողական կերպով ներգործել այս կամ այն շրջանի վրա։

Ուրեմն կը վերջացնենք մեր խօսքը. չենք ուրանում որ մեր մէջ ժամանակով կարող է կազմակերպվել մի ժողովրդական ինտելիգենցիա, և գլխաւորապէս մեր ուսուցչական դասակարգից, մեր հոգևորականութիւնից և նոյն իսկ բարձրագոյն ուսում ստացած մեր երիտասարդութիւնից, բայց անուրանալի է որ այս տեսակ միջնորդ դասակարգ՝ մտաւոր կենտրօնական շրջանների և ամբոխի մէջ դեռ ևս չէ կազմակերպվել, այնպէս որ օրինակ, ղեկավարող մամուլի և անշարժ ամբոխի մէջ դեռ ևս չը կայ մեզանում մի միջնորդ դասակարգ, մի հասարակական կապող օղակ, նոյն իսկ այն պատճառով որ մեր ներքին կեանքի կազմակերպութեան պակասաւոր կողմերի շնորհով, նա չը կարողացաւ կազմակերպվել։

Բայց դարձեալ յոյս չը կորցնենք, որ ժամանակով և մեզանում կը կազմակերպվի ժողովրդական ինտելիգենցիայի մի որոշ, հաստատ, ժողովրդի կեանքի հետ սերտ կապ ունեցող, ժողովրդի կեանքի կարիքները ներկայացնող, այդ կարիքներն ըմբռնող և ամբոխը իր կեանքի առաջադէմ ընթացքի մէջ ղեկավարող դասակարգ։

Այն ժամանակ մեր մամուլն էլ, որի պաշտօնն է, ինչպէս ամեն տեղ, ղեկավարել հասարակաց կարծիքը, աւելի ընդունակ կը դառնայ ըմբռնելու ժողովրդի առօրեայ, ընթացիկ կենսական հարցերն ու երևոյթները, ուրեմն մամուլն էլ իր գործունէութեան մէջ կը կատարելագործվի, քանի որ նրա գործունէութեան վրա դիտակցաբար կը վերահսկի ինքն ամբոխը իր սեփական ինտելիգենցիայի միջոցով, մամուլն էլ աւելի ընդունակ կը լինի իր կոչմանը արդիւնաւոր կերպով ծառայել և իր կոչման բարձրութեան վրա աւելի արժանաւոր կերպով կանգնել։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ԲԷՖՕՐՄՆԵՐԻ ՀԱՐՑը

—

Կայսերական գնացքի կործանման դէպքը, որի մասին մինչև այժմ էլ խօսում է ամբողջ Ռուսաստանի մամուլը, մի մեծ պատճառ դարձաւ, որպէս զի թէ հասարակաց կարծիքը և թէ մամուլը նորից խօսէին երկաթուղային բէֆօրմների մասին։

Երկաթուղիների այժմեան կանոնների և կարգերի դէմ բողոքելը մի սովորական երևոյթ է կազմում ռուսաց ամբողջ մամուլի մէջ, իսկ վերջին դէպքը, որ պատահեց Կայսերական գնացքի հետ, առիթ տուեց կատաղի յանդիմանութիւններ և նոյն իսկ հայհոյանք թափելու այն մարդկանց դէմին, որոնք այսպէս թէ այնպէս կապ ունեն երկաթուղիների գործի հետ։ «Եթէ նոյն իսկ Կայսերական գնացքը ենթակայ է վտանգի՝ երկաթուղիների վարչութեան անհոգութեան պատճառով, ապա ինչ պիտի լինի հասարակ մահկանացուների դրութիւնը»,—ասում էին ոչ թէ միայն այն օրգանները, որոնք վաղուց ի վեր սովոր են բողոքել երկաթուղիների կարգ ու կանոնների դէմ, այլ և նոյն իսկ ամենապահպանողական օրգանները, որոնք հակառակ լինելով ընդհանրապէս ամեն մի բէֆօրմի, տարիների ընթացքում պաշտպանում էին, այսպէս կոչված, «երկաթուղային տուղերի», և այն էլ միայն անձնական շահերը։

Հետևելով վերջին շաբաթների ընթացքում մամուլի մէջ արտայայտվող կարծիքներին, հեշտութեամբ մարդ այն եզրակացութեան է գալիս, որ երկաթուղային բէֆօրմների խնդիրը անյետաձգելի է համարվում։ Եւ իսկապէս որ անյետաձգելի է, քանի որ այդ խնդիրը, ոչ թէ երէկ կամ անցեալ օրն է յարուցված, այլ դա յարուցված է դեռ սրանից տասն, տասն և հինգ տարի առաջ, երբ նոյն իսկ այդ բէֆօրմների հարցը մշակելու համար կազմվեցաւ մի յանձնաժողով, որը ուսումնասիրելով իր վրա դրած հարցը՝ ահագին հատորներ լոյս ընծայեց, առաջարկելով արմատական փոփոխութիւններ մտցնել երկաթուղային վարչութիւնների մէջ։

Այն ժամանակվանից շատ տարիներ անցան. նրանից յետոյ հաղորդակցութեան ճանապարհների մինիստրութիւնը շատ նոր կանոններ մշակեց թէ պետական և թէ մասնաւոր երկաթուղիների համար, բայց չշափելի օգուտ այդ բոլորից դուրս չեկաւ, և այդ պատճառով այդ ճանապարհների թերութիւնների դէմ արտայայտվող բողոքները տարուց տարի ոչ թէ միայն չեն քչանում, այլ և աճելով աճում են։

Դա արդէն ուղղակի ապացոյց է, որ բէֆօրմների խնդիրը անյետաձգելի է։ Թէ ինչի մէջ պէտք է կայանան այդ բէֆօրմները, որպէս զի նոքա կարող լինեն վերջ տալ երկաթուղու վարչութիւնների անկանոն գործողութիւններին, անհոգութեան և կամայականութիւններին, և միւս կողմից էլ ծառայեն երկրի ազգաբնակութեան անմիջական շահերին,—դրանց մասին մենք չենք խօսի, որովհետև դրանց մասին խօսելու համար ոչ թէ յօդուածներ, այլ ամբողջ հատորներ պէտք է գրել, որովհետև դրա վրա պէտք է աշխատեն հարիւրաւոր մասնագէտ և գործին անմիջական տեղեակ անձինք։

Մենք միայն մեր կողմից էլ մասնաւոր ենք ուզում անել այն անհրաժեշտութեան վրա, որ այսօր զգացվում է երկաթուղային բէֆօրմների գործի վերաբերմամբ, ցանկանալով, որ դէթ այժմեանից այդ հարցը դրական հողի վրա կանգնէր և ուրան կարելի է շուտով վճռվէր և իրագործվէր։

*

ՄԻԼԴԻՈՒ ԵՒ ԹՈԶ

—

Ֆիլօքսերայից յետոյ, որը միլիոնների վնաս հասցրեց ամբողջ Եւրօպայի դենդրոնութեանը, փչացնելով ահագին տարածութեան վրա խաղողի որթեր, վերջին ժամանակներս երևան է եկել մի ուրիշ հիւանդութիւն խաղողի որթի վրա, որը աւելի մեծ վտանգ է սպառնում։ Դա միլդիու կոչված հիւանդութիւնն է։ Ֆիլօքսերան, որ մուտք էր գործել և Կովկաս, փոքր առ փոքրը թուլանում է, և եթէ շարունակվի նրա դէմ միջոցներ ձեռք առնելու գործը, ինչպէս այդ անում է Գիւղատնտեսական ընկերութիւնը, հաւանական է, որ այդ հիւանդութիւնը կանհետանայ Կովկասի խաղողի այգիներից։ Բայց միլդիուն ոչ թէ միայն չէ անհետանում, այլ նա բաւական զգալի կերպով տարածվում է և ներկայումս Կախեթում, Սղնախի և Թէլաւի գաւառներում, Ալազանի հովտում, Լագօդեխի և Զաքաթալի կողմերում շատ զգալի է միլդիուի տուած վնասը։ Այդ հիւանդութեան նշաններ երևացել են նոյնպէս և Լիաքիի, Աղդաշի և ուրիշ մի քանի գիւղերի այգիներում։ Թէև Նուխու գաւառում միլդիուն այդքան մեծ վնասներ դեռ չէ տուել, բայց դորա փոխարէն Թ ո զ կոչված հիւանդութիւնը, որը շատ տարածված է ոչ թէ միայն Նուխու կողմերում, այլ և Երևանի նահանգի մի քանի տեղերում, Նախիջևանի և Զանգեզուրի գաւառներում, գլխաւորապէս Ագուլիսում, Մեղրիում, Շիրվանի ձորում, նոյնպէս և Զիլանչիրի և մինչև իսկ Շուշու գաւառում, այնքան նուազցել է խաղողի բերքը, որ այս տարի այդ բոլոր տեղերում զգալի է գինու մեծ պակասութիւն։ Այդ պատճառով գինու գինը շատ բարձրացել է։ Միլդիու երևացել է և Զիլանչիրում։

Տարաբաղդաբար այս տարվայ խոնաւ եղանակը մի կողմից, իսկ խաղողի որթի շատ խիստ կերպով անկելը միւս կողմից, շատ են նպաստել այդ տեսակ հիւանդութիւնների զարգանալուն, և այդ պայմանները ամենապարարտ հող են ներկայացնում գլխաւորապէս միլդիուի համար։

Միլդիու և Թ ո զ կոչված հիւանդութիւնների դէմ տեղական ազդաբնակութիւնները ընդհանրա-

պէս մի դրական միջոց չեն գործ դնում, և այդ է պատճառը, որ այդ վանդաւոր հիւանդութիւնները սպառնում են աւելի տարածվել և աւելի մեծ վնասներ տալ։

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՑԽԱՑԻՑ

Հոկտեմբերի 26-ին

Ամեն մի լուր, ինչ որ տպվում է Ախալցխայից պատուական «Մշակ» լրագրում, ախալցխացին կարդալով վերագրում է ինձ. բայց շատ անգամ լրատուն գործին ծանօթ չը լինելով, իրողութիւնը խեղաթիւրում է, հետևաբար ինձ է նկատվում այսպիսի սխալմունքը։

«Մշակի» 120-որդ համարում Ախալցխայի երկսեռ դպրոցների նորընտիր տեսուչ պ. Յովհաննիսեանի և աւագ ուսուցչի պաշտօնակատար պ. Խօջամիրեանցի մասին տպված լուրը նոյնպէս չեղված էր ճշմարտութիւնից. ուստի աւելորդ չի լինի իմ կողմից ուղղելը։—Պ. Խօջամիրեանց հրաւիրված էր ոչ թէ աւագ ուսուցիչ, այլ աւագ ուսուցչի ժամանակաւոր պաշտօնակատար 15 դասով. ուրեմն, թէ հոգաբարձութիւնը և թէ Խօջամիրեանց ի նկատի ունեցել են, թէ երբ և իցէ կարող է հրաւիրված լինել մի այլ ոք աւագ ուսուցչի, կամ տեսչի պաշտօնում։ Այժմ հոգաբարձութիւնը հրաւիրած լինելով, և ըստ հրամանի վեհափառ Կաթողիկոսի, դեր. Թեմակալ Առաջնորդը հաստատելով (հոկտ. 8 համար 661) պ. Աբիսողոմ Յովհաննիսեանին տեսուչ Ախալցխայի երկսեռ դպրոցների համար, այդտեղ ոչինչ վիրաւորանք չը կար պ. Խօջամիրեանցին. և մանաւանդ որ, հոգաբարձութիւնը չէ բացասած և չէ բացասում պ. Խօջամիրեանցին 800 բուբլի ռոճիկը, որ ինքն պայմանաւորված է 15 դասի համար. հետևաբար միմեանց օձիքից բռնելու, պատիւ և իրաւունք վերականգնելու՝ ոչինչ առիթներ չը կան։ Միայն անհամակրելի է, միանգամայն և դատապարտելի մի քանի անձանց վարմունքը, որոնց յատկանիշն է միշտ խեղաթիւրել ամեն հարցերը....

«Մշակի» ընթերցողը գուցէ յիշէ, որ մենք էլ ունենք այստեղ Հայոց Բարեգործական ընկերութեան բաժինը, որի գոյութիւնը միայն թղթի վրա է արձանագրված, որովհետև ոչինչ անելով չափազանց յոգնածութիւնից, իր գոյութեան օրից քնում է։ Ներկայ տարվայ սկզբում, երբ վարչութեան անդործութեան մասին բողոքներ յայտնվեցան, վերջին ընդհանուր ժողովում, բիւդժէտի հաշւում մտցրած էր մի պատկառելի գումար գորգագործութեան արհեստի տարածման մասին. այն ժամանակ ևս կասկածներ յայտնվեցան նպատակի աջողութեան մասին, ի նկատի ունենալով անցեալը (որ կրկնվում էր նախահաշւում մի քանի տարիների հետ), և յիշեալ գումարով գրաղարան-ընթերցարան բանալու խնդիրը, որի կարևորութիւնը և գործի հեշտութեամբ գլուխ գալու մանրամասնութիւնները պարզվեցան ժողովում. բայց վարչութեան անդամների հաստատակամութեան առաջ կրկին անգամ գլուխ խոնարհեցրեց ժողովը։ Անհաւասիկ անցաւ մի տարի ևս, և այդ մի քանի տարիների ենթադրութիւնը ի կատար ածելու յոյսերի ոչ մի նշոյլ չէ երևում։ Էլ ինչ Բարեգործական ընկերութիւն. էլ ինչ սիրա և ցանկութիւն է մընում անդամակցելու մի այդպիսի, սոսկ անուանական ընկերութեանը. և գուցէ գտնվեն մարդիկ, որոնք անտարբեր անունը դրոշմեն մեզ, եթէ անդամների թիւը օրից օր նուազում է։ Լաւ կը լինէր, որ վարչութեան անդամ անուն կրողները, խոստովանելով իրանց տկարութիւնը, հեռանային ասպարէզից. և հասարակութեան արդար բողոքներին թէ՝ «դուք ոչ կարէք գործել, և որք գործեն, արգելուք զնոսա» բաւականութիւն տային։

Ա.։ Ա.։

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ԲԱՅԱԶԷՏԻՑ

Հոկտեմբերի 26-ին

Երկար մտադրութիւնից յետոյ վերջապէս առիթ ունեցայ այցելելու Նոր-Բայազէտի Ալաչկերտ կոչված գաւառի քանի մի գիւղերը։ Որովհետև 1828—29 թվի ռուս-տաճկական պատերազմին, այս գաւառի ժողովուրդը գաղթել է Տաճկաստանի Ալաչկերտ գաւառից և վերաբնակվել է այստեղ, ուստի հին հայրենիքի անունով Ալաչկերտ է ասվում։ Այդ գաւառը իր պատմական նշանակութեամբ, արձանագրութիւններով, աւերակ վանքերով կարող է բանասէրներին մեծ նիւթ տալ իր անցեալից, բայց այդ թողնելով մի հմուտ և փորձված գրչի, մի քանի խօսք ասենք նրա կեանքի մասին։

Ալաչկերտը ունի մօտաւորապէս 30 հայաբնակ գիւղեր, որոնք ընկած են Գեղամայ լճի հարաւարևմտեան ափերում։ Ժողովուրդը ապրում է հողագործութեամբ և անասնապահութեամբ. այդ բաղմահայ գաւառը թէ որ աստիճան աղքատութեան մէջ է ապրում, մանաւանդ այսպիսի երաշտ տարիներում,—այդ կարելի է եզրակացնել հետևեալից։ Ալի-Շախ գիւղում մենք իջևանել էինք մի տանը. չը նայած որ մեր տանտէրը գիւղի ունևոր մարդկանցից մէկն էր, այնու ամենայնիւ իր մերկ որդկերանց ցոյց տալով, դանդատվում էր, թէ ստիպված ենք այսպէս մերկ անցկացնել ձմեռը. ուրեմն պարզ է չունևոր գիւղացու դրութիւնը։ Ալաչկերտի ժողովուրդը ապրում է հին նախնական սովորութիւններով. նրանց հոգագործական գործիքները, ընտանեկան կահ-կարասիները նոյնն են, ինչ որ եղել են հարիւր տարիներ առաջ. նրանց սայլը, արօրը և այլ այսպիսի գործիքներ այնքան ծանր են, որ մի զոյգ լծկաններ հազիւ տեղից շարժել կարող են. ուրեմն պարզ հասկանալի է, որ ինքն գիւղացին իր տգիտութեամբ որքան դժուարութիւնների է դատապարտված, մանաւանդ երբ ամեն բան նոյն աստիճան անտարբերութեան մէջ է գտնվում։

Այդ բաղմաթիւ հայաբնակ գիւղերից որ և է մէկը չունի ուսումնարան, բացի Գեօղալ-Դարա գիւղից, որտեղ կայ մի ռուսաց գիւղական ուսումնարան. դրանց կրթութեան գործը այնքան յետ է մնացել, այնքան անմխիթար դրութեան մէջ է, որ ուրախալի էր, եթէ գիւղական քահանաները գոնէ հին ձևով լոկ կարդալ-գրել սովորեցնէին միանգամայն թշուառութեան մատնված անմեղ մանուկներին։ Բայց արդեօք գիւղերում կան այնպիսի քահանաներ, որոնք հոգ տանէին կրթութեան գործի համար,—ինքն գիւղական քահանան ուղիղ գրել-կարդալ անգամ չը գիտէ։ Այս գիւղերում որքան անմխիթար է ընտանեկան կեանքը, կրթութեան գործը, նոյնքան էլ անմխիթար և միանգամայն ցաւալի դրութեան մէջ է գտնվում եկեղեցին։ Փորձեցէք մանել Զօլախաչի, Ալի-Շախի, Աղվամանի, Ղարանլուղի, Գեօլի և-կեղեցիները,—ինչ տխուր տպաւորութիւններ են թողնում այցելուի վրա այդ որբատները, որոնց մէջ է պարունակվում մի ամբողջ ժողովրդի յոյսը, հաւատը, նրա գոյութիւնն անգամ. այն երկիրը, որի հնութիւնները, վանքերի բեկորները ցոյց են տալիս այդ երկրի փառաւոր անցեալը, այն ժամանակվայ ժողովրդի բարեպաշտութիւնը,—այսօր նոյն տեղում բնակվող ժողովուրդը չունի դէթ մի կանոնաւոր եկեղեցի։ Այդ եկեղեցիների շուրջը, եթէ չը լինէին խաչարձաններ և դերեզմաններ, անշուշտ ամեն ոք գոմի տեղ կընդունէր. ներսը նոյնպէս եթէ չը լինէին բեմեր, որոնց կեղտի և փոշու տակից նշմարելի են պատկերներ, այդ շինութիւնները կընդունէինք խոնաւ, մութ, ծակ առաստաղով խրճիթի տեղ։ Զօլախաչի գիւղի կենտրոնում գտնվում է մի մեծ խաչարձան, կանգնած դրութեան մէջ, որի երկարութիւնն է $5^3/_4$, իսկ լայնութիւնը $2^1/_2$ արշին, մի պատկառելի մեծութեամբ, որ նայողին սարսափեցնում է. նրա վրա հին արձանագրութիւն չը կայ, միայն վերջին թանգութեան ժամանակ տեղական քահանան փորագրել է։ «Բարեպաշտ Ալէքսանդր Թագաւորը ազատեց սովից աշխարհը բոլոր», իսկ ետևում՝ այն ժամանակվայ մթերքների գները։

Վեր առնենք Դարաչիչակը, և համեմատենք Ալաչկերտի հետ. այդտեղ կը տեսնենք մի ահագին տարբերութիւն։ Դարաչիչակի ժողովուրդը իր ընտանեկան կեանքով, կրթութեան գործով, բարեպաշտութեամբ՝ շատ և շատ բարձր է Ալաչկերտի ժողովրդից։ Դարաչիչաղը ունի լաւ ճանապարհներ, նա չիվում է հարևան ազգերին, յարաբերութիւն ունի նշանաւոր քաղաքների հետ և պարզ բան է, որ նրա ժողովուրդը իր այդ եռացող կեանքով առաջ է գնացել, այն ինչ Ալաչկերտը պաչարված լինելով արևմտեան և հարաւային կողմերից բարձր լեռնաշղթաներով, իսկ արևելեան կողմից լճով, որա միակ յարաբերութիւնը Նոր-Բայազէտի հետ է. ուրեմն հասկանալի է, որ Ալաչկերտի ժողովուրդը, բնակվելով կղզիացած տեղում և առանձնութեան մէջ, միշտ մնացել է այն, ինչ որ էին իր պապերը, և գուցէ այսպէս էլ շարունակվի։

Ց. Տ. Մ.

ՆԱՄԱԿ ԹՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, նոյեմբերի 2-ին

«Մշակի» 124-որդ համարի առաջնորդողում մի թիւրիմացութիւն է մտել, որը խոնարհաբար խնդրում եմ ուղղէք, տեղ տալով ձեր լրագրի էջերում այս երկտողիս։

Խօսելով հանդուցեալ Կարապետ վարժապետ Բէլախեանի կեանքի վերջին տարիների մասին, ի միջի այլոց յիշում էք, որ «նա իր մանաւոր ուսումնարանը ինձ յանձնելով, գրեթէ ոչինչ օժանդակութիւն չէր ստանում ինձանից»։

Հարկաւոր եմ համարում բացատրել, թէ՝ ահա տասն և հինգ տարի է, որ հանդուցեալը թողնելով ուսումնարանը իմ խնամքին, առանձնացել և բնակվում էր արտաքոյ ուսումնարանի։ Այս ամբողջ ժամանակամիջոցում, բացի վերջին երկու տարիներից, նա շարունակ ինձանից ստացել է ամսական 60 բուբլի, որի համար ես հանդուցեալից ստացած ունեմ գրաւոր ապացոյցներ, և որը, եթէ հարկը պահանջի, ամենայն բոպէ պատրաստ եմ ներկայացնել ընթերցող հասարակութեանը։

Սակայն վերջին երկու տարին հանդուցեալը ինքը անձամբ ակնատես լինելով, որ ինչ ինչ պատճառներով ուսումնարանի ծախսերը շատացան, և որ եկած արդիւնքը չէ ծածկում ծախսերը՝ կամաւ հրաժարվեց ինձանից օժանդակութիւն ստանալուց և դիմեց իր նախկին աշակերտներին, որոնք չնորհով պ. Նիկողայոս Միրզոյեանի ջանքերին, չը զլացան նրան օգնելուց՝ ամսական 40 բուբլի թոշակ կապելով նրան, որը և նա ստանում էր մինչև իր կեանքի վերջին օրերը։

Օ. Օրբէլեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Մշակի» ներկայ համարի հետ, ինչպէս ամեն տարի, Թիֆլիսից դուրս ապրող մեր բոլոր բաժանորդներին (բացի արտասահմանի բաժանորդներից), ուղարկում ենք տպված ծրարներ տպված նամակներով, մեր լրագրի բաժանորդագրութեան դործը հեշտացնելու համար։

—

Ռուս լրագիրները հաղորդում են, որ Սերբիայի Նատալիա թագուհին, որը իր մարդուց ապահարզան է ստացել, դալու է Ղրիմ, որտեղ և հաստատելու է իր մշտական բնակութիւնը։

—

Այսօր, շաբաթ օր, նոյեմբերի 5-ին, պիտի դումարվի Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան հերթական ընդհանուր ժողովը։ Հերթական գործերը վերջացնելուց յետոյ, ժողովը կը լսի պ.պ. Իվանովի և Ալիբէգովի զեկուցումները խաղողի հիւանդութիւնների մասին։ Սկիզբը է երեկոյեան $7^1/_2$ ժամին։ Ներկայ կարող են լինել և կողմնակի անձինք։

—

ԵԼԵՆՕՎԿԱՑԻՑ մեզ գրում են հոկտեմբերի 31-ից հետևեալը։ «Արդէն մի քանի օր է, որ ամբողջ Դարաչիչագը ծածկվել է ձիւնով, այնպէս որ Ծաղկաձորի ուղղաձիգ լնռները նոյնպէս ծածկված են սպիտակ սաւանով։ Ցուրտը այժմ սկսել է ներգործել ամեն մի արարածի վրա, չը նայած որ դեռ աշնանային ամիսների մէջն ենք գտնվում։»

—

ԳԱՆՁԱԿԻՑ մեզ գրում են։ «Քիչ կենդանութիւն չէր տուել մեր Գանձակ քաղաքին տեղիս զինուորական ատեանի գործունէութիւնը, որը սկսվել է հոկտեմբերի 15-ին։ Այս տարվայ զինուորների թիւը 29 է, դրանցից 25 հոգի հայեր են, 2 մալականներ և 2 գերմանացի դաղթականներ։ Քսան և հինգ հոգի հայերից՝ 6 տեղացիք են, մնացածները գիւղերից։ Այդ նոր զինուորներին երդում տալ տուեցին և արձակեցին երկու ամիս ժամանակով իրանց տները։»

—

Մեզ գրում են, որ հոկտեմբերի 30-ին Գանձակի գիմնազիայում տարեկան հանդէս տեղի ունեցաւ։ «Ցեսչի կարդացած հաշվից, ասում է թղթակիցը, իմացանք, որ գիմնազիայի աշակերտների թիւը հասնում է 210 հոգու, որոնցից 121 հայեր են։ Սակայն առաջադիմութեան կողմից առաջին տեղը բռնում են վրացիք, երկրորդ տեղը՝ ռուսներ, երրորդ տեղը՝ հայեր, չորրորդը՝ թուրքեր։»

—

ՐՕՍՏՕՎ (Դոնի վրա) քաղաքից մեզ գրում են։ «Բելգիայի Բրիւսէլ քաղաքի ցուցահանդիսի երդուեալ դատաւորները (jury) վճռել են տալ մեծ արծաթեայ մէդալ Սերովբէ Անանեանին նրա ֆաբրիկայում պատրաստվող պապիրոսի թղթի տետրակների և գլուղաների համար։ Բրիւսէլի «Moniteur» լրագիրը խօսում է Անանեանի ֆաբրիկայի մասին, որը առաջինն է Ռօստովում և համարում է այդ ֆաբրիկայի ապրանքները ամենագերազանց և ամենաընտիր ապրանքներ։»

—

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻ մեր մշտական թղթակիցը մեզ գրում է, որ չուտով լինելու են այդ քաղաքում քաղաքագլխի և քաղաքային դումայի ձայնաւորների ընտրութիւնները, և ահա, աւելացնում է թղթակիցը, ամեն կողմից լսվում են ինտրիգաներ, դործի վրա ոչ ոք չէ մտածում, լոկ անձինք են առաջ դալիս, և կանդիդատների մեծ մասը խաւարամիտ, անուս և յետադէմ մարդիկ են։ «Աղդականութիւնը և խնամութիւնը՝ մեզ համար ամենայն ինչ է», վերջացնում է իր խօսքը մեր թղթակիցը։

—

Ինչպէս մեզ հաղորդում են Նոր-Նախիջևանից մեր բանաստեղծ Րաֆայէլ Պատկանեան յետադգել է իր ճանապարհորդութիւնը դէպի Կովկաս։

—

Ռուս «Кавказъ» լրագիրը լսել է, որ հոկտեմբերի 29-ին, Սուխումի մօտ գտնվող իր կալուածքում, երկարատև և ծանր հիւանդութիւնից յետոյ վախճանվեցաւ «Кавказъ» լրագրի նախկին խմբագիր Նիկոլայ Վ.օրոնով։

—

Թիֆլիսի քաղաքային զինուորական ատեանի գործողութիւնները արդէն աւարտվեցան. նոյեմբերի 2-ին զինուորակոչի ենթարկված երիտասարդները, որոնք թուով 576 հոգի էին, վիճակ հանեցին։ Իսկ միւս օրը վիճակահանութեամբ զինուորական ծառայութեան մէջ մտնողները, որոնք թուով 100 էին, ենթարկվեցան բժշկական քննութեան։

—

Ահա երեք օր է արդէն, որ Ռուսաստանի փոստը ստացված չէ Թիֆլիսում, Կովկասեան գլխաւոր լեռնաշղթայի վրա եկած ձիւնի և ճանապարհների խանգարվելու պատճառով։

—

Մեզ խնդրում են տպել հետևեալը. Նուխու գաւառում մի քանի հատ գիւղեր կան, որոնք պարսիկ խաների, լեզգիների և այլ լեռնաբնակ մահմէտականների ձեռքից նեղութիւններ կրելով, մօտ երկու դար է, բոլորովին հեռացել են եկեղեցուց, կորցրել են մայրենի լեզուն, և հայերէն լեզուով հացի անունն անգամ չը գիտեն, թէև նրանք ամենայն խստութեամբ պահում են եկեղեցական շատ օրէնքները, պասեր, ուխտագնացութիւն, և այլ ազգային աւանդութիւններ։ Այն գիւղերը, որոնք զուտ հայեր են եղել մի և կէս դար առաջ, իսկ այժմ մահմէտական կրօնն ընդունելով և մայրենի լեզուն մոռանալով, այժմ իրանց հայ չեն համարում. հետևեալներն են՝ Բուս, Կուրտաշէն, Վարդանլու, Քիչ (Գիս) և այլն։ Իսկ հետևեալ լուսաւորչական թրքախօս գիւղերը, Զոռլու, Միրզաբէգլու, Սօլթան-Նուխի, Եդին-Քեանդ և այլն, կորցնելով իրանց մայրենի լեզուն, բոլորովին խորթացել են ազգայնութիւնից։ Ահա այդ թրքախօս Զոռլու գիւղում չինվելու է մի նոր եկեղեցի, որի համար Նուխու յաջորդ Վահան վարդապետ Տէր-Գրիգորեանց դիմել է իր մի քանի բարեկամների աջակցութեան, որ յիշեալ եկեղեցու շինութեան օգտին կամաւոր նուէր ժողովեն։ Նուէրներ կարելի է չնորհել փողով, կամ եկեղեցական սպասներով, ինչպէս են՝ շուրջառ, բուրվառ, սաղաւարտ, ժամաշապիկ, սկիհ, աւետարան և այլն, և այլն։ Ցոյս ունենք, որ ամեն մի բարեսիրտ մարդ, իր լուման չի խնայի թրքախօս մի գիւղի հայ եկեղեցու օգտին։ Նուիրատու անձինք կարող են ստորագրվել մատեանում, որ ուղարկված է Ղազարոս քահանայ Յովսէփեանին Թիֆլիսում։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Կ. ՊՕԼՍԻ ՆՈՐԸՆՏԻՐ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ

Ցայնժամ ոտքի ելաւ Երուսաղեմի Պատրիարք

Ամեն. Տ. Ցարուքիւն Պատրիարք և հետևեալ մը-տօք բանախօսութիւն մը արտասանեց։

‹Ձեր Կ. Պոլսոյ նախորդ Պատրիարք և Երուսաղիմայ այժմեան Պատրիարք Վեհապետեանը՝ սեպուհ պարտականութիւն մը կը զգայ շնորհապարտ զգացումներ յայտնել առ Պատկառելի Երեսփոխանութիւնդ այն սերտ համարման և կըրկին վստահութեան համար, որովք պատուեցիք զինքն ընտրելով յայս պաշտօն, այն սիրտը որ ի մանկութենէ ուսած է յարգել Ազգին հրամանները, չը կրնար անտարբեր մնալ այդ երախտագիտական պարտականութիւնը կատարելու։ Այսօր Վեհապետեանը կուգայ՝ Կ. Պոլսոյ հին Պատրիարքաց աւանդութեանց համաձայն՝ գաւառանի աւանդման գործողութիւնը կատարել, և այս հանդիսաւոր առթիւ, իւր շնորհակալութեանց հետ, նաև իւր հրաժեշտի ողջոյնը մատուցանել։

‹Կը յիշէք թէ 1885-ին, յունուարի մէջ, ձեր այս նուիրական վստահութիւնն առաջին անգամ յայտնեցիք իմ անձիս վրայ, ընտրելով զիս Պատրիարք Կ. Պոլսոյ, և Վեհափառ Սուլթանը բարեհաճեցաւ մարտ 15-ին վաւերացուցեալ սոյն ընտրութիւնն։ Առի ձեր հեռագիրներն, եկայ, հասայ, և բազմելով այդ փշալից աթոռին վրայ, պատրիարքական իշխանութիւնն երեք տարի և երեք ամիս վարեցի, պարագայից բերման համեմատ աշխատելով և աքնելով, այնպիսի դժուարին ժամանակներու մէջ, յորս ազգային գործերը տարտամ վիճակի մէջ էին և անվստահութիւն կը տիրէր։ Բայց Աստուծոյ և մեր առատագութ Կայսեր ապաւինելով, յարգեցի, պաշտեցի, նուիրագործեցի ձեր իմ վրայ ունեցած այդ առաջին վստահութիւնն։ Աչալուրջ երեսփոխանութեան աջակցութիւնն և Տէրութեան ու Ազգին գործոց հըմուտ կրկին վարչութեանց գործակցութիւնը մեծապէս օգնեցին ինձ. ասոր համար շնորհակալութիւն ձեզ, տեարք երեսփոխանք, և շնորհակալութիւն առ վարչութիւնս։ Եւ ամենէն առաջ իմ խորին երախտագիտութիւնս կը մատուցանեմ աստ, առ Օգոստափառ Սուլթանն մեր որոյ թանկագին հովանին կը վայելենք և զոր հանապազ օրհնել մեր նուիրական պարտականութիւնն է։ Մանաւանդ մեր պատրիարքական կարճ միջոցին, Ն. Կ. Վեհափառութիւն հաճեցաւ մեծամեծ դիւրութիւններ շնորհել ինձ, թէ հողային և թէ գաւառական այն մեծ խնդրոց կարգադրութեանց համար, որք ծագեցան։ Աստուած օրհնէ Նորա հայրաշէն ձեռնարկները, երկար և բարեբաստիկ կեանք շնորհէ Նմա և երկնային պարգևօք լնու և զօրացնէ Օգոստափառ Սուլթան Համիդ Բ. Կայսրն մեր։

(Բոլոր ներկայք յոտնկայս ձայնակցեցան այս մաղթանաց և երիցս ծափահարութեամբք ‹Կեցցէ Վեհափառ Սուլթանն› գոչեցին։)

‹Ձեր երկրորդ վստահութեամբ կոչեցիք զիս ի Պատրիարքութիւն Երուսաղեմի, այն է, ի գլուխ այդ չարչարեալ միաբանութեան։ Վեհապետեանի ճակատագիրն եղած է ի մանկութենէ, անձկութիւն, նեղութիւն և տառապանք. և կերթամ այժմ չարչարակից լինիլ այդ բազմաչարչար միաբանութեան։ Իրաւ է թէ ունինք ուրիշ շատ մը միաբանութիւններ, բայց Ս. Յակոբեանց միաբանութիւնն՝ իբրև զինուոր կանգնած՝ ամեն տառապանաց կը տոկայ և ամեն զոհողութիւն յանձն կառնու Ազգին և Եկեղեցւոյն իրաւունքները պաշտպանելու համար։ Ուստի կը խնդրեմ և կը յուսամ որ ինչպէս առաջին պաշտօնիս մէջ չը զլացաք ինձ ձեր աջակցութիւնը, նոյնպէս և երկրորդին մէջ չը պիտի զլանաք ինձ զայն։ Վստահ եմ մանաւանդ Նորընտիր Ս. Պատրիարք Հօր վրայ որ ամեն դիւրութիւններ պիտի տայ ինձ։ Նա վանական է, կը զգայ և գիտէ վանական կեանքի մը պահանջումներն ու զըժուարութիւններն։ Ողորմութեամբն Աստուծոյ և շնորհիւ մեր Օգոստափառ Վեհապետին հայրական հոգածութեան, լի եմ յուսով որ Երեսփոխանութեանդ ինձ նկատմամբ արտայայտած երկրորդ վստահութիւնն ևս կը պսակուի։ Բարեբաղդութիւն կը համարիմ ինձ վստահութեամբ ուսեալ նաև թէ Երուսաղիմայ պարտուց ինդիրն ալ մօտ օրէն կը կարգադրուի և ասոր համար ալ շնորհապարտ ենք առ կայսերական բարեհնամ կառավարութիւնն։

‹Այս պարագայից մէջ իմ հրաժեշտս մատուցանելով ձեզ, երեսփոխան տեարք և Ս. Հարք, կը մաղթեմ որ Աստուած զօրավիդ լինի համայն ազգիս, Երեսփոխանութեան, Վարչութեան, Միաբանութեան և ինձ։

‹Այժմ սիրելիք, որ Ս. Պատրիարք Հայրն իւր ուխտը կատարեց, կուգամ վաղեմի պատրիարքաց սովորութեան համաձայն՝ ես իմ ձեռօք յանձնել նմա պատրիարքական դաւազանն, և կար ու կարողութիւն մաղթել Սրբազան եղբօր։ Անցեալ ժամանակաց մէջ այսպէս էր սովորութիւնը և ես այսօր հետեւելով այդ աւանդական սովորութեան, Ս. Հայր, Աստուծոյ և Ազգին կողմէ կուտամ ձեզ այս դաւազանը, որուն տակը շատ փուշեր, շատ նեղութիւններ կան, բայց դուք իմաստուն էք և գիտէք իմաստութեամբ գործածել զայն։›

Տ. Ցարուքիւն Պատրիարք իւր բանախօսութիւնն աւարտեց, Սաղմոսին հոգեշունչ խօսքն արտասանելով, յայտնապէս խռովեալ ձայնիւ և յուզեալ դիմօք ‹Ընդէ՞ր տրտում ես անձն իմ, և ընդէր խռովեցար. յուսա՛ ի Տէր և խոստովանեա՛ Նմա›։ Եւ դառնալով առ Տ. Խորէն Պատրիարք, յանձնեց Նմա պատրիարքական դաւազանն զոր ի ձեռին ունէր, և երկու Պատրիարքունք ողջագուրեցին զիրար։ Ցետոյ յոտնկայս, ջերմ մաղթանքներ կատարեցին վասն բարօրութեան Օգոստափառ Սուլթանին և վասն օսմանեան պետութեան։›

Բոլոր ներկայք ձայնակցեցան այս մաղթանաց և ծափահարութեամբք թնդացուցին տաճարն։

ՆՈՐ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՒԱՆՔԸ

Բերլինում արդէն տեղի ունեցան նոր ընտրութիւնները, և նոցա հետևանքների մասին մեզ հասած տեղեկութիւնները արժանի են ուշադրութեան, արժանի ենք ասում, որովհետև վերջին ընտրութիւններով, ինչպէս հաստատապէս երեւում է, ազատամիտ կուսակցութիւնը չօշափելի յաղթութիւն է տանում։

Ազատամիտ կուսակցութեան ընտրողները վերջին մի քանի տարվայ ընթացքում զգալի կերպով չատացան. օրինակ, 1885 թուին դրանց թիւը հասնում էր 2,592-ի, իսկ այս տարի այդ թիւը հասաւ 3,348-ի։ Այդ թիւը մեծ նշանակութիւն ունի և այն պատճառով, որ դրանով ոչ թէ միայն ազատամիտ կուսակցութիւնն է մեծանում, այլ դրա հետ միասին նուազում են այդ կուսակցութեան հակառակ՝ պահպանողական կուսակցութիւնները։ Դրա հետ միասին աճում է և ազգային-ազատամիտ կուսակցութիւնը դաւառներում, և այդ էլ ուշադրութեան արժանի երևոյթ է, քանի որ վերջին ժամանակներս ազգային-ազատամիտ կուսակցութիւնը չատ հարցերում բաժանվեց պահպանողական կուսակցութիւնից, և մտաւ ընտրողական պայքարի մէջ կամ ինքնուրոյն կերպով, և կամ ձեռք ձեռքի տալով մի քանի հարցերի վերաբերմամբ ազատ-մտածողների կուսակցութեան։

Այդպիսով ազատ-մտածողների կուսակցութիւնը կարողանում է աւելի այժ ոտանալ, աւելի աճել նոյն իսկ ժողովրդական ընտրողների մէջ։

Գերմանական ազատամիտ մամուլը այն կարծիքն է յայտնում, որ այդ աջողութեամբ յիշեալ կուսակցութիւնը չատ պարտական է հանգուցեալ Ֆրիդրիխ կայսրի բռնած ընթացքին, նրա հռչակաւոր մանիֆէստին, և նրա աւելի ազատկաւոր յիշատակարանին, որը այնքան չփոթ պատճառեց իշխան Բիսմարկին, և թուլացրեց նրա ունեցած ազդեցութիւնը։

Մի քանի այդպիսի հանգամանքների պատճառով ընտրողները ձայն տուեցին ազատ-մտածողների կուսակցութեան պատկանողներին, չը նայած, որ հետևելով յայտնի Պուտկամէրի, Բիսմարկի այդ հարազատ հետևողի սիստեմային, կառավարչական օրգանները այս կամ այն ճանապարհներով բաւական աշխատում են, որպէս զի պահպանողականները ձայների առաւելութիւն ստանան։

Ինչպէս երևում է իշխան Բիսմարկի բռնած ընթացքը աջողութիւն չի ունենալու, և գուցէ վերջնական ընտրութիւնները, որոնք պէտք է տեղի ունենան նոյեմբերի 6-ին, բոլորովին կը հիասթափեցնեն երկաթէ կանցլերին։

Ցամենայն դէպս ազատ-մտածողների աջողութիւնը անկասկած կը համոզէ կառավարութիւնը, որ այն հայեցակէտերը, որոնցով ղեկավարվել է մինչև այժմ իշխան Բիսմարկ, կարօտ են յայտնի ատիճանի փոփոխութեան։

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՇԸԳԵԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՄԱՍԻՆ

Թիւրքահայերի նորընտիր Խորէն սրբազան Աշըգեան պատրիարքի մասին Կ. Պոլսի լրագիրները հաղորդում են հետևեալ կենսագրական տեղեկութիւնները, որ աւելորդ չենք համարում հաղորդել հասարակութեանը։

Ներընտիր Պատրիարք Խորէն Սրբազան Աշըգեան 1840-ին միջոցները ծնած է Եալովայի Քէչէմէթ գիւղը։ Նորին սրբազնութեան մկրտութեան անունն է Սերովբէ. 9—10 տարեկան հասակին մէջ Արմաշու վանքը մտած է և աշակերտած է նշանաւոր հայագէտ բազմարդիւն Մաւեան Յովհաննէս պատուելիին, ուսած է հայերէն, ֆրանսերէն և իտալերէն լեզուներն և այլ և այլ ուսումներ վանուց վարժարանին մէջ, և 1858-ին սարկաւագ ձեռնադրուած է։ Իւր մատաղ հասակէն նորին սրբազնութիւն գրականութեան սիրող մը և գրագէտ մը եղած է։ Չորս տարի յետոյ, 1862-ին, վերոյիշեալ պատրիարքական տեղապահ Մաղաքեան Ստեփաննոս արքեպիսկոպոսէն վարդապետ կը ձեռնադրուի Գում-Գարուի մայր եկեղեցւոյ մէջ. այդ թուականէն է որ կը սկսի նորին սրբազնութեան իբրև ուսուցիչ, իբրև խմբագիր, իբրև հեղինակ, իբրև թարգմանիչ և իբրև քարոզիչ ընդարձակ գործունէութիւնը։ Նոյն ժամանակ վանուց Ժառանգաւորաց վարժարանին մէջ կը դասախօսէ այլ և այլ լեզուներ և ուսումներ։ Առաջին անգամ այդ միջոցները կը հիմնուի նաև վանուց մէջ ‹Յուսոյ› ամսաթերթն, որուն խմբագրապետն և ամենէն գործօն յօդուածագիրներէն մին կը լլլայ Նորին սրբազնութիւնը, գրելով անընդհատ ամեն տեսակ նիւթոց վրայ, ազգային, եկեղեցական, պատմական, լեզուաբանական, քննադատական և բանասիրական. 1867-էն մինչև 1872-ի վերջերն այս բոլոր պաշտամանց վրայ կը ստանձնէ նաև վանուց վարժարանին ուսումնասիրութեան պաշտօնը, զոր կը վարէ մեծ եռանդեամբ և յաջողութեամբ։ Աշըգեան սրբազան վանահայր կարգուած է 1872-ին, և 1873-ին սկիզբներն Ազգ. Պատրիարքարանի յանձնարարութեամբ հանդուցեալ վեհ. Գէորգ Կաթողիկոսէն եպիսկոպոս ձեռնադրուած է, և անմիջապէս սկսած է նոր մղում մը տալ թէ վարժարանին և թէ տպարանին։ Մեծ էր նորին սրբազնութեան սէրն իւր ձեռակերտն եղող վարժարանին վրայ, և մեծ էր աշակերտաց վրայ եղած ազդեցութիւնն։ 1874-ին վերստին կը բանար ‹Յուսոյ› ամսաթերթն, որուն հրատարակութիւնը ժամանակ մը ընդհատուած էր, և նորա խմբագրապետութիւնը կը յանձնէր իւր նախկին աշակերտներէն Ցաճատ վ. Ոսկանեանի։ Ինքն իսկ ամեն. Աշըգեան, մերթ Ստեփանէ ստորագրութեամբ և մերթ անստորագիր բազմաթիւ ընտիր յօդուածներ կը հրատարակէր ‹Յուսոյ› մէջ, ամեն տեսակ նիւթերու վրայ՝ իրեն յատուկ պերճախօս և խմաստասէր ոճով։ 1877-ին վերջերն Արևելեան պատերազմին երեսէն վանքը նիւթական ճախորդութեանց հանդիպելով և դեռ հին պարտքն ալ ամբողջովին վճարուած չըլլալով՝ հարկ եղաւ ընդհատել ‹Յուսոյ› խմբագրութիւնն և փակել Ս. Ղևոնդեանց վարժարանն՝ ամբողջ շրջան մը բոլորելէ և ազգին բաւական շրջանաւարտ աշակերտներ նուիրելէ յետոյ։ 1878 թուականէն մինչև ցարդ նորին սրբազնութեան գլխաւոր ջանքն եղած էր ազատել վանքը պարտուց ծանր բեռէն, առ որ յաջողեցաւ վերջապէս առատասիրտ ձեռնտուութեամբ Միքայէլ էֆ. Յակոբեանի։ Նոյն միջոցին Աշըգեան սրբազան կը զբաղէր նաև գրական երկասիրութեանց, և Պոլսոյ մամլոյն մէջ կերևէր մերթ իւր բուն ստորագրութեամբ և յաճախագոյն Ասողիկ ծածկանուան տակ. իւր յօդուածներ մեծ ուշադրութիւն կը գրաւէին ուսումնական շրջանակաց մէջ, և Կ. Պոլսոյ շատ նշանաւոր գրագէտներ իրենց հիացումն յայտնած են Ասողիկի յօդուածոց նկատմամբ։ Նորին սրբազնութիւն խորին հմտութիւն ունի հայերէն գրաբար լեզուի, Աստուածաբանութեան, փիլիսոփայութեան և պատմութեան, հաւասար ճարտարութեամբ և դիւրութեամբ կը գրէ գրաբար և աշխարհաբար լեզուներով, բարձր և պերճախօս գրիչ մը ունի, որ յաճախ վսեմի կը բարձրանայ։ Բաջահմուտ է նաև ֆրանսերէնի, իտալերէնի և եկեղեցական երաժշտութեան. Թուրքերէն լեզուով ալ կը խօսի դիւրութեամբ։

Ն. սրբազնութեան երկասիրութիւններն և թարգմանութիւններն են, բացի ‹Գոթոդիա› ողբերգութեան թարգմանութենէն և արդէն յիշուած բազմաթիւ յօդուածներէն. 1) ‹Հերձուածող պապութիւն› (La Papauté schismatique), որուն առաջին հատորը միայն տպագրուած է, 2) ‹Վարդապետարան›, զոր թարգմանած է իւր կողմէն ընդարձակ յաւելուածովք և ընտիր ծանօթութեամբք. 3) ‹Տրամաբանութիւն›, որ ազգային վարժարանաց մէջ իբրև դասագիրք կը գործածուի. 4) Ընդարձակ փիլիսոփայութիւն մը (անտիպ) արդի ընտրական դպրոցի դրութեամբ. 5) Առանձին տնտեսագիտութիւն. 6) Հրապարակախօսութիւն, գործ Աբբա Պօթէնի, որուն մէկ մասը միայն հրատարակուած է մաս առ մաս ‹Յուսոյ› մէջ. 7) Կանայք Աստուածաշնչի, երկու ստուարագոյն հատորներ (անտիպ). 8) Ընդարձակ եկեղեցական ընդհանուր պատմութիւն մը (անտիպ)։

1884-ին Աշըգեան սրբազան Թուրքիոյ հայոց կաթողիկոսական երից ընտրելեաց մին հանդիսացաւ, և վերջապէս 1888-ի սեպտ. 29-ին Ազգային Ժողովոյ բացարձակ և ստուարագոյն մեծամասնութեամբ Թուրքիոյ Հայոց Պատրիարք հռչակուեցաւ։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Վիէննայի ‹Allgemeine Zeitung› լրագիրը զանգատվում է որ զօրքի վրա ծախսերը քանի գնում են՝ հետզհետէ աւելանում են և լրագիրը սարսափով է նայում ապագայի վրա, մտածելով որ այդ ծախսերը դարձեալ պէտք է աւելանան հետզհետէ։

—Վիէննայի ռուսաց դեսպան Լոբանով-Ռոստովսկի այս օրերս երկար տեսակցութիւն ունեցաւ պապի նուիրակ կարդինալ Գալիմբերտիի հետ։

—Կոմս Կալնոկի և կոմս Տաաֆէ յաճախ տեսնվում և բանակցում են իրար մէջ Ֆրանց-Յոսէֆի կայսրի Պրագայում թագադրվելու մասին, որպէս Չէխիայի թագաւորի։

—‹Արևելք› լրագրում կարդում ենք հետևեալը։ ‹Մուշէն հոկտեմբերի 2-էն գրուած նամակէ մը կը քաղենք հետևեալ տեղեկութիւնը։ Պապական հայոց առաջնորդին դէպքին առթիւ ձերբակալուած չորս երիտասարդաց համար կըսվի թէ Վանայ վերաքննիչ ատեանը 10-ական տարուց բանտարկութեան վճիռ արձակած է։ Գերապայծառը կիսովին աւարտեց պապական հայոց եկեղեցւոյ շինութիւնը։ Կըսվի թէ ի մօտոյ Կ. Պոլիս պիտի ուղևորվի։›

—Լրագիրներում կարդում ենք, որ Իտալիայի Ումբերտոս թագաւորը Բերլին պիտի ուղևորվի առաջիկայ յունվար ամսին, Վիլհելմ կայսրի ծննդեան տարեդարձը շնորհաւորելու համար։

—Հեռագիրը արդէն լուր բերեց Փարիզից, որ սահմանադրութեան վերաքննութեան համար կազմված յանձնաժողովը այն միտքն է յայտնել, որ պէտք է լուծել սենատը և ոչնչացնել հանրապետութեան նախագահի պաշտօնը։ Ցանձնաժողովի յայտնած միւս կարծիքների մասին մենք դեռ տեղեկութիւն չունենք. բայց այդ տեղեկութիւնն էլ բաւական է այն կարծիքի գալու համար, որ սահմանադրութեան վերաքննութիւնը արմատական բնաւորութիւն կունենայ, և գուցէ ուրիշ մեծ փոփոխութիւններ կառաջարկի անել։ Այժմեան մինիստրութիւնը ընդհանրապէս համաձայն է յանձնաժողովի անդամների մեծամասնութեան հետ։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Նորերս Ռուսաստանի գիւղերից մէկում մի գիւղացի ‹դրաղ եկաւ› իր ընկերոջ հետ, 1/4 վեդրօ օղիով, որ ինքը կարող է ուտել ապակեայ բաժակ։ Եւ նա սկսեց ուտել. հէնց առաջին կծելուց նրա լեղուն և շրթունքները պատուվեցան և խեղճի բերանից սկսեց առատօրէն արիւն հոսել. բայց ուշադրութիւն չը դարձնելով դրա վրա, նա շարունակեց կծել և ծամել ապակեայ բաժակը, և ամեն տեսակ նեղութիւններ կրելով կարողացաւ բաժակի կէսը ուտել, և շարունակում էր միւս կէսն էլ ուտել.... Եւ այդ բոլորը 1/4 վեդրօ օղիի համար....

* * *

Այս օրերս Բերլինի փողոցներում սկսեցին երևալ վելօսիպեդ-կառքեր։ Ինչպէս վկայում են այնտեղի լրագիրները, դոքա յարմար են երկու մարդու նստելու համար և արտաքուստ էլ շատ գեղեցիկ են։

* * *

Ամերիկական աստղագէտները իրանց արած վերջին հետազօտութիւնների հիման վրա յայտ-

նում են, որ արեգակի և երկրի միջի տարածութիւնը համնում է 20 միլիօն մղոնի։

***

Աւստրիացոց Եղիսաբէթ Թագուհին այժմ զբաղված է յունաց նոր լեզուի ուսումնասիրութեամբ, և ինչպէս հաղորդում են Վիէննայի լրագիրները, մեծ առաջադիմութիւն է ցոյց տալիս։

***

Ցիւրիխում այս օրերս աւարտվեցաւ մի նշանաւոր շինութիւն. այդ շինութիւնը պատրաստված է դիակներ այրելու համար։

***

Այս օրերս վախճանվեց Ամերիկայի յայտնի կին-գրող Բիչեր-Ստոու։ Դրա անունը անծանօթ չէ և հայ ընթերցողներին՝ նրա «Թոմաս եղբօր տնակը» յայտնի գրքից, որը հայերէն թարգմանել է հանգուցեալ օրիորդ Տէր-Մարկոսեան։

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 Նոյեմբերի։ Հրատարակված է հարաւ-արևմտեան երկաթուղիների 4% օբլիգացիաների ստորագրութեան մասին՝ 20,300,000 րուբլի գումարի։ Օբլիգացիաների տոկոսները ապահովացնում են կառավարութեան կողմից։ Ստորագրութիւնը կը բացվի Նոյեմբերի 8-ից պետական բանկում և նրա գրասենեակներում, Մոսկվայում, Վարշավայում, Րիգայում, Կիէվում, Խարկօվում և Օդեսայում, այլ և Պետերբուրգում Միջազգային և ուրիշ բանկերում, Մոսկվայի վաճառականական, Վարշավայի առևտրական և Րիգայի բօրսային բանկերում։—Ժողովրդական լուսաւորութեան մինիստրի ցանկութեամբ նրա ծառայութեան 50-ամեակի տօնախմբութիւնը չէ ենթադրվում։

ՍԱՄԱՐԿԱՆԴ, 3 Նոյեմբերի։ Վաճառական Րէշետնիկով, «Կուզրինի» ընկերութեան գլխաւորը, ձեռնարկեց այստեղ առաջին ռուսաց բամբակի գործարանի հիմնարկութեանը։

ԿՕՊԵՆՀԱԳԷՆ, 3 Նոյեմբերի։ Երէկ երեկոյեան հասաւ այստեղ Թագաժառանգ Ցեսարևիչը. կայարանում նրան դիմաւորեց Դանիայի ամբողջ Թագաւորական տունը։ Այսօր Նորին Բարձրութիւնը այցելեց առաջին մինիստրին։

ՓԱՐԻԶ, 3 Նոյեմբերի։ Սահմանադրութեան վերաքննութեան յանձնաժողովը այն միտքն է յայտնում, որ պէտք է ոչնչացնել սենատը և հանրապետութեան Նախագահի պաշտօնը։—Այսօր բացվել է Պաստեօրի ինստիտուտը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 Նոյեմբերի։ Ֆինլանդական մեծ-իշխանութեան մինիստր ստատս-սէկրետարի օգնական գեներալ Էրնրոտ նշանակված է Ֆինլանդական մեծ-իշխանութեան մինիստր ստատս-սէկրէտար։—Պետերբուրգի առևտրական դատարանը Ֆէօդոր Օվսիաննիկովին սնանկ յայտնեց. $3^1/_2$ միլիօն պակասորդ կայ։—Փարիզի «Mmtin» լրագրի այն յօդուածի առիթով, որը պնդում էր իբր թէ Ռուսաստանը 1879 թւին Ֆրանսիային առաջարկում էր դաշնակցութիւն կապել, «Journal de St. Petersbourg» լրագիրը նկատում է, որ որոշ միտում ունեցող խօսխուացիաները սահման ունեն։ Ռուսաստանը, ի հարկէ, ցանկանում է, որ Ֆրանսիան վերադարձնէ Եւրօպայում իրաւացի կերպով իրան պատկանող և եւրօպական հաւասարակշռութեան համար անհրաժեշտ դրութիւնը, բայց համոզված է, որ խաղաղութեան պահպանութիւնը համապատասխանում է երկու պետութիւնների շահերին էլ։ «Matin» լրագրի խօսխուացիաները վնասում են միայն գործին, որին կամենում է նա ծառայել։

ՉԱՐՋՈՅ, 4 Նոյեմբերի։ Իսհակ-խանի աֆղանական Տաւրկեստանում յայտնվելը առ այժմ չէ հաստատվում։

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

—

ԱՐՄԱՒԻՐ. Պ. Մ. Դուք ասում էք որ 1885 թւին մի թատրօնական պիէսա ունէք ուղարկած Թիֆլիսի մի թերթի խմբագրութեան, և այդ պիէսան յետոյ յանձնվել է հայոց թատրօնական մասնաժողովին, իսկ այժմ յայտնի չէ որտեղ է գտնվում յիշեալ պիէսան, որի վերնագիրն է «Խաւար և Լոյս»։ Դուք խնդրում էք մեզ որ մենք ստանանք այդ պիէսան։ Կատարում ենք ձեր խնդիրքը և այստեղ հրապարակապէս խնդրում ենք այն պարոններին, որոնց ձեռքումն է պիէսան, որ բարեհաճեն հասցնել այդ հեղինակութիւնը «Մշակի» խմբագրութեանը։ Տեսնենք կուղարկեն մեզ թէ ոչ։

ԱԽԱԼՑԽԱ. Մեր թղթակիցներին։ Ցայտնում ենք որ Յ. Խօջամիրեանցի և Աբիսողոմ Յովհաննիսեանի տեսչական հարցի մասին ծագած տարաձայնութիւնների վերաբերմամբ յօդուածներ և նամակագրութիւններ այլ ևս տպելու չենք։

ՐՈՒՇՉՈՒԿ. Յարութիւն Երամօվ. Ձեր ուղարկած 2 րուբլին, նամակով, որով դուք պահանջում էք գրքեր, հասցրինք Թիֆլիսի կենտրօնական գրավաճառանոցին (Librairie Centrale)։ Մենք ինքներս գրքեր վաճառելով չենք զբաղվում, բացի մի երկու բրօշիւրներից, որոնք «Մշակի» խմբագրատանն են ծախվում։

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԱԿԱՆ ԱԿՈՒՄԲԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

խոնարհաբար խնդրում է ընկերութեան պ.պ. անդամներին շնորհ բերել արտաքոյ կարգի նիստին, որ կայանալու է 6-ին Նոյեմբերի 12 ժամին պ. Եսայի Փիթօյեանի տանը, Նագօրնայա փողոցի վրա։ Այս ժողովը նշանակվում է Հոկտեմբերի 23-ին չը կայացած ժողովի փոխարէն և համաձայն ընկերութեան § 41, ժողովը կը կայանայ որքան անդամ էլ որ ներկայ լինեն։ 1—2

ԵՐԵՒԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ առեանում 15-ին նոյեմբերի, այս տարվայ, նշանակված է աճուրդ և երեք օրից յետոյ կրկնաճուրդ, կապալով տալու համար **ԵՐԵՒԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿՇԻՌԸ**, ժամանակով 1-ից դեկտեմբերի այս տարվայ, մինչև երեք տարի։

Ցայտնելով այս մասին ի գիտութիւն ընդհանրութեան, վարչութիւնը յայտնում է ցանկացողներին, որ կապալի պայմանները կարելի է տեսնել վարչութեան առեանում առաւօտեան 9-ից մինչև 12 ժամ։ 1—1

ԵԳԻՊՏՈՍԻ ԱԼԷՔՍԱՆԴՐԻԱ ՔԱՂԱՔՈՒՄ ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼՈՒ Է

„ՆԵՂՈՍ"

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Լրագրոյս տարեկան բաժանորդագինն է ամեն տեղի համար 10 ֆրանք,—վեցամսեայն 5 ֆրանք. միշտ կանխիկ վճարելի։

—փոստային ծախսը խմբագրութեանս կը վերաբերի։

—Լրագրոյս վերաբերեալ ամեն կարգի գրութիւնք պէտք է յղել հետևեալ հասցէիւ. «Առ խմբագրութիւն «ՆԵՂՈՍ» լրագրոյ» յԱլէքսանդրիա (Եգիպտոս). (բոստ Էժիբսիէն)։ A la Rédaction du Journal Arménien ‹NÉGHOS›, Alexandrie (Egypte). (Poste Egyptienne).

ԽՄԲԱԳԻՐ—ՏԷՐ ԱՆՏՈՆ ՌՇՏՈՒՆԻ

COMPAGNIE DES MESSAGERIES MARITIMES

PAQUEBOTS-POSTE FRANÇAIS.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

(ՄԵՍԱԺԸՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ.

Ուրբաթ, 11/23 Նոյեմբերի, ԲԱԹՈՒՄԻՑ դուրս կը գնայ շոգենաւ ERIDAN (ԷՐԻԴԱՆ) նաւապետ KEGER (ԿԷԳԷՐ), մտնելով Կ. Պօլիս, Պօրտ-Լաճօր և Լակավալ։

Ագէնտները՝ ԲԱԹՈՒՄՈՒՄ պ. Գ. ԷՍՍԷՆԺԷՐ, իսկ ԹԻՖԼԻՍՈՒՄ ԳԷՈՐԳ ՀԵՋՈՒԲԵԱՆ ՀԵՋՈՒԲԵԱՆՑ։ 2—2

Ր. ԿԵՕԼԷՐԻ ԵՒ ԸՆԿ.

ՖԱԲՐԻԿԱՅԻ ՊՕՄԱԴՆԵՐ

ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

1) Խինայի. 2) Ուղեղի.

3) Բարդիի, բժշկապետ Շվէյկարտի

արժանի են ամենքի ուշադրութեան, ում թանգ է, պօմադը գործածելու ժամանակ՝ մազերի պահպանելը։

Ծախվում է դաւառներում բոլոր նշանաւոր վաճառականների, իսկ Մոսկվայում Ր. Կեօլէրի և ընկ. մօտ, Նիկօլսկայա փողոցում։ № 11. Ц. К. О. (3—3)

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

ԱԲԻՍՈՂՈՄ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑԻ

ՌՈՒՍԵՐԷՆԻՑ-ՀԱՅԵՐԷՆ ԲԱՌԳԻՐՔ

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐ

Գինն է 3 րուբլի, ճանապարհի ծախսը գնողի վրա է։

Միանուագ քանից աւելի գնողին զեղչումն կը լինի։

Վաճառվում է ԲԱՑԱՌԱՊԷՍ Խէրլէկեանի և ընկ. գրավաճառանոցում, Թիֆլիս, Գօլօվինսկի Պրօսպէկտ, առաջին Գիմնազիայի հանդէպ։ 13—40

Ց Ա Ց Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն Ն Ե Ր

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—9—11 ժ. վիրաբուժական, նաև ատամնացաւի, սիֆիլիսի և աչքի ց.

ՐՈՒԴԿՈՎՍԿԻ—10—11 ժ. Ներքին, երեխայոց և կանանց ց.

ԿԻՆ-ԲԺԻՇԿ ԻՍԱՀԱԿԵԱՆՑ—$11^1/_2$—12 ժ. կանանց և երեխայոց ց.

ԲԵՆԿԼԵՎՍԿԻ—11—12 ժ. ականջի, կոկորդի, քթի ց. և սիֆիլիսի։

ԱՐՏԵՄԻԵՎ—12—1 ժ. երեքշաբթի, ուրբաթ և կիւրակի կանանց ց.

ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—12—1 ժ. Ներքին և երեխայոց ց. բացի կիւրակի։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

ԳԱԴՕՄՍԿԻ—$4^1/_2$—$5^1/_2$ ժ. կաշուի ցաւերի և սիֆիլիսի.

ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—$5^1/_2$—$6^1/_2$ ժ.

ՓՈՒՂԻՆԵԱՆ—$5^1/_2$—$6^1/_2$ ժ. Ներքին, երեխայոց և ջղային ց. (էլեկտրօտերապիա)։

Հիւանդանոցումն է մանկաբարձուհի Մօզեր։

Վճար—50 կ.։ Համախորհրդի (կօնսիլիումի) համար փոխադարձ համաձայնութեամբ։

Հիւանդանոցի վերատեսուչ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

ВЪ ГЛАВНОМЪ СКЛАДѢ ЖИРАРДОВСКИХЪ МАНУФАКТУРЪ

ԺԻՐԱՐԴԵԱՆ ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐՆԵՐԻ ԳԼԽԱՒՈՐ ՊԱՀԵՍՏՈՒՄ

Դվօրցօվայա փողոցում, Նախկին Արծրունի քարվանսարայում նոր ստացվել են պատրաստ ԲՐԷԶԵՆՏՆԵՐ հետևեալ չափերի.

$2^1/_2$×3, 3×4, 3×5, 3×6 4×5, 4×6, 5×7.

ԴՕՆՆԷՐ և ԼԷՑՑ

3—10

ЗУБНЫЯ СРЕДСТВА А. ШТЕХЕРЪ

ПОДОЛЬСКІЯ ЗУБНЫЯ КАПЛИ КОРОБКА 50 и 80 К.

ГИГІЕНИЧЕСКІЙ КОКАИНОВЫЙ ЗУБНОЙ ЭЛИКСИРЪ БОЛЬШ. ФЛАКОНЪ 80 К.

ГИГІЕНИЧЕСКІЙ ЗУБН. ПОРОШОКЪ КОРОБКА 30 К.

СКЛАДЪ ВО ВСѢХЪ АПТЕКАХЪ и АПТЕК. МАГАЗ.

ՊՐՕՎԻԶՕՐ **Ա. ՇՏԷԽԷՐԻ** ՄԻՋՈՑՆԵՐԸ

ԱՏԱՄՆԵՐԻ ՑԱՒԻ ԵՒ ՓՉԱՆԱԼՈՒ ԴԷՄ

ՊՕԴՕԼԵԱՆ ԱՏԱՄՆԱԴԵՂ ԿԱԹԻԼՆԵՐ 80 ԿՕՊ.

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԿՕԿԱՅԻՆԵԱՆ ԱՏԱՄՆԱՅԻՆ ԷԼԻԿՍԻՐ 80 ԿՕՊ.

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԱՏԱՄՆԱՅԻՆ ՓՈՇԻ 30 ԿՕՊ.

ԳԼԽԱՒՈՐ ՊԱՀԵՍՏ. ԹԻՖԼԻՍՈՒՄ՝ կովկասեան դեղավաճառատան, և պ. պ. Շահպարոնեանցի, Մակկէրի, Սէնչիկօվսկու և Ազմուբօվի դեղատներում. ԲԱԳՈՒԻ մէջ, Բէկկէրի մօտ, ՔՈՒԹԱՅԻՍՈՒՄ՝ կօկօչևի մօտ, ՍՏԱՎՐՕՊՕԼՈՒՄ Բրօխնօցկու մօտ և ԵԿԱՏԵՐԻՆՕԴԱՐՈՒՄ։ (Հ.)

Дозволено цензурою, Тифлисъ 4 Ноября 1888 г.

Типографія Канцеляріи Главноач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовск. ул. д. каз.